

Պ. Ի. Շառաթյանյան

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՂԿԱՊՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՅԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեզվի մեջ շաղկապների կատարած դերը բարդ և լուրջ ուսումնասիրության արժանի խնդիր է: Շաղկապների քերականական արժեքը բաղմակողմանի է և ենթակա է հետազոտության համասարապես ձևարանական, շարահյուսական, իմաստարանական, ոճաբանական և այլ տեսակետներից: Սույն հոդվածում քննության են առնվում հին հայերենի շաղկապների կիրառության շարահյուսական և ոճաբանական մի քանի բնորոշ առանձնահատկությունները:

ա) Շաղկապի դիրքը նախադասության մեջ.—Որպես կապակցական բառեր շաղկապները հաճախ զրվում են կապվող միավորների միջև: Վերցնենք, օրինակ, երկու նախադասություն. «Ողբումովին և հաւատք ի քէն մի պակասեսցեն» (Առակք, Գ, 3), «Ուստի՝ գաս կամ յո՛ւ Երթաս» (Յովնան, Ա, 8): Առաջին նախադասության մեջ և շաղկապը զրված է նախադասության համազոր անդամների՝ երկու ենթակաների միջև, իսկ երկրորդում՝ երկու նախադասությունների միջև: Երկու դեպքում էլ շաղկապը հանդիսանում է մի օղակ, որ կապակցում է իր աջ և ձախ կողմերում զրված շարահյուսական միավորները: Նման կապակցություններում շաղկապը գրավում է միջանկյալ դիրք, դրվելով կապվող երկու միավորների մեջտեղում և կարծես համասարապես բաշխվում է դրանց միջև: Սակայն, չնայած շարահյուսական միավորներ կապակցելու իրենց դերին, շաղկապները միշտ չէ, որ այսպիսի միջանկյալ դիրք են գրավում այդ միավորների միջև: Խոսքի մեջ շաղկապների շարադասությունը բաղմաղան կարող է լինել:

Շաղկապը կարող է գրվել մեկ պարզ նախադասության սկզբում, որը շարահյուսական անմիջական կապ չունի որևէ նախադասության հետ: Նման դեպքերում իհարկե շաղկապը չի գտնվում կապվող միավորների մեջտեղում: Վերցնենք հետևյալ նախադասությունը. «Այլև վիճեալ ևս պնտին ի բանիցն վերայ» (Եզեիկ, էջ 70): Այստեղ այլև շաղկապը զրված է մի պարզ նախադասության սկզբում, նրանով սկսվում է մի նախադասություն, որը շարահյուսորեն անջատ և առանձին միավոր է, այն անմիջական կերպով քերականորեն կապված չէ մի ուրիշ նախադասության հետ: Այս հանգամանքը կարող է թվալ տարօրինակ և անհամատեղելի շաղկապների դերի հետ, քանի որ վերջիններիս պաշտոնն է՝ երկու շարահյուսական միավորներ կապակցել իրար հետ, այնինչ այստեղ միայն մեկ պարզ նախադասություն է, որ քերականորեն կապված չէ ուրիշ նախադասության հետ: Սակայն այստեղ բացակայում է սոսկ քերականական կամ շարահյուսական անմիջական կապը, իսկ մտքի կապն անպայման գոյություն ունի: Քերականական կապի բացակայությունը կամ խնդրահարկի դադարը չի խանգարում, որ այս նախադասությունը մտքով կապվի նախորդի հետ և հենց այդ մտքի կապն է, որ իրագործված է այստեղ այլև շաղկապի միջոցով: Բայց գալով շաղկապի շարադասությանը, այստեղ խոսք չի կարող լի-

ներ նրա միջանկյալ դիրքի մասին, շաղկապն այստեղ ունի առաջադաս դիրք, քանի որ գտնվում է նոր նախադասության սկզբում, և որքան էլ վերջինս մտքով կապված լինի նախորդի հետ, այնուամենայնիվ շարահյուսորեն մի առանձին և ամբողջական միավոր է:

Վերցնենք մի ուրիշ օրինակ. «Եթէ խազաւոր նորա իցէ Որմիղդ, զիաւ զբարիոք արտածսն իւր տայցէ շարշարել» (Եզնիկ, էջ 87): Սույն նախադասության մեջ դարձյալ շաղկապը՝ երէն-ն առաջադաս դիրք ունի, բայց ի տարբերություն վերի նախադասության, այստեղ երէ շաղկապը շարահյուսական և մտքի կապ է ստեղծում հաջորդ միավորի՝ լրացող նախադասության երկրորդ բաղադրիչի հետ:

Վերջապես, շաղկապը կարող է դրվել նաև Լտադաս, ինչպես՝ «և այլքն՝ որ ոչ էին անդր մօտ, Երանի ևս տան ժողովոցն» (Բարսեղի վեցօրեայք, էջ 66), ևս շաղկապն այստեղ վերաբերում է իրեն նախորդող բառին, ուստի ունի վերջադաս դիրք կապվող միավորի նկատմամբ:

Այսպիսով հայերենի շաղկապները շարահյուսությամբ կարող են լինել առաջադաս, միջադաս և Լտադաս:

Մտկայն, շնայած շարահյուսության այսպիսի ճկունությանը, շաղկապներն այնուամենայնիվ հիմնականում որոշակի դիրք ունեն խոսքի մեջ: Մեծ մասամբ դրանք դրվում են առաջադաս: Շաղկապի Լտադաս դիրքը հազվադեպ երևույթ է գրաբարում: Իսկ այն դեպքերում, երբ վերևում նշված ձևով շաղկապը դրվում է կապվող միավորների մեջտեղում, ուշադիր գննությանը պարզվում է, որ այդ միավորներից երկրորդի հետ շաղկապն իր դիրքով ավելի շատ է մերձենում, քան առաջինի: Վերցնենք մի երկու օրինակ. «Միծաղելով գործէ անդլ-գամ դշար, իսկ իմաստութիւն առն նիւթէ զհանձար» (Առակք, է, 23): Ակնհայտ է, որ իր երկու կողմերում գտնվող համազոր նախադասությունները կապակցող իսկ շաղկապը երկրորդ նախադասության հետ ավելի սերտ է առնչված, քան առաջինի հետ և շարահյուսությամբ էլ էապես գտնվում է երկրորդի մեջ: Մի ուրիշ օրինակ. «...գնոսին նովին ոգւով և նովին մարմնով արկանէ ի գեհեն, յանշէջ հուրն, յախտենից տանջանս, մանաւանդ զայնոսիկ, որ իբրև զբեղդ ևն ի կոռապաշտութեան» (Աղաթ., էջ 64): Այստեղ էլ մանաւանդ շաղկապը սերտորեն առնչված է նախադասության այն անդամի հետ (խնդիր՝ զայնոսիկ), որին անմիջականորեն նախորդում է, իսկ կապվող միավորներից առաջինը երկրորդից անջատված լինելով նախադասության ուրիշ անդամներով՝ հեռացել է շաղկապից: Ավելի ակնառու փաստ է հետևյալը. նախադասության և շաղկապով կապվող համազոր անդամները երբ այլ բառերով անջատվում են, այդ և-ը հեռանալով առաջին անդամից, հարում է երկրորդին, օրինակ. «ո՞րք զառանցութիւն զայսպիսի բանս և առասպել համարիցի» (Եւսեր., Ժամ., էջ 27), նախադասության երկու համազոր անդամները՝ զառանցութիւն և առասպել իրարից անջատված լինելով այլ բառերով, շաղկապը, որ պետք է դրվեր դրանց միջև, հեռացել է առաջինից և հարել երկրորդին՝ դրվելով նախադասության հանդամանքն ակնհայտ կերպով հաստատում է այն իրողությունը, որ շաղկապները կապվող միավորներից երկրորդի հետ ավելի են առնչվում, քան առաջինի հետ: Այս բանն ամենից շատ վերաբերում է ստորադասական շաղկապներին, որովհետև վերջիններս առավել սերտորեն են կապվում երկրորդական նախադասության հետ և միշտ դրվում են նրա կազմում: Ասվածից հետևում է, որ շաղկապները, քանի որ շարահյուսությամբ ավելի շատ իրենցից հետո եկող

շարահյուսական միավորին են մոտենում, ընդհանուր առմամբ ունեն առաջադաս դիրք։ Այս պատճառով էլ Վ. Բաղրատունին պրոմ է. «Շաղկապաց տեղի է նախ քան զկապելի բառն և ի սկիզբն կապելի բանին, այլ ոչ սակաւ ուրեք խախտին ի բնիկ կայիցն»¹։

Շաղկապի շարահասության փոփոխությունը նախադասության մեջ մեծ մասամբ ոճական անհրաժեշտություն է և կախած է արտահայտվող մտքից, նույն թե հեղինակն ինչ և ի՞նչպես է ուզում ասել, ո՞ր բառին է վերադրում շաղկապական հարաբերությունը, կամ ո՞ր բառի վրա է դնում տրամաբանական շեշտը, օրինակ՝ «Իսկ դու եթէ զայս գործես» զպարտան վճարես» (Ոսկ., Մ. Պ. Բ. հատ., էջ 39) նախադասության երկ շաղկապը կարող էր գրվել դու եթե կայից առաջ՝ իսկ երկ դու զայս գործես, այս դեպքում կատարվեր ոճական տարբերակ՝ պայմանի հարաբերության որոշ ընդարձակմամբ (պայմանը կտարածվեր ամբողջ նախադասության վրա և ոչ թե միայն զայս խնդրի վրա)։ կարող էր գրվել նաև զայս-ից հետո՝ իսկ դու զայս երկ գործես, որը կլիներ նույն մտքի ոճական մի այլ տարբերակը պայմանի հարաբերության առավել նեղացմամբ (պայմանը կվերաբերեր միայն գործես ստորոգյալին)։ Ուրեմն նախադասության ներսում շաղկապի շարահասության նման փոփոխությունները ծառայում են հստակորոշող միտքն ավելի ճիշտ և կոնկրետ արտահայտելու համար։

Շարադրվածից պարզ է, որ շաղկապը պետք է անմիջականորեն կից գրվի այն միավորներից մեկին, որոնց կապակցում է իրար հետ, բայց զբաղարում կան շաղկապի և նրանով կապվող միավորների խզման զանազան դեպքեր։ Հաճախ նախադասությունն անջատվում, հեռանում է իր շաղկապից և դրանց միջև ընկնում է մի այլ միջանկյալ նախադասություն, որով խզում է առաջանում շաղկապի ու նրանով կապվող միավորի միջև, օրինակ. «Տէր, ոչ զոք ունիմ, քէ, յորժամ ջուրքն յուղիցին, արկցէ զիս յաւաղանն» (Յովհ. Ե, 7)։ Այստեղ քէ շաղկապն անջատվել է այն նախադասությունից, որին վերաբերում է, և դրանց միջև մի ուրիշ նախադասություն է ընկել։ Այս միջնորդավորված նախադասության ուղիղ շարահասությունը կլինի՝ տէր ոչ զոք ունիմ, քէ արկցէ զիս յաւաղանն, յորժամ ջուրքն յուղիցին։

Շաղկապի և կապվող միավորի խզումը, սակայն, չպետք է այնպես լինի, որ չհասկացվի, թե շաղկապը շարահյուսական ո՞ր միավորին է վերաբերում, հակառակ դեպքում կառաջանա իմաստի երկվություն, կամ առնվազն շարահյուսական անբնական ձև։ Գրաբարյան հին տեքստերում, որոնք մեր ձեռքն են հասել երկար դարերի ընթացքում բազմաթիվ գրիչների ձեռքի տակից անցնելուց և ինչ-ինչ փոփոխություններ կրելուց հետո, կան դեպքեր, երբ շաղկապը նշված անբնական ձևով անջատվել է շարահյուսական այն միավորից, որին վերաբերում է, այսպիսին է շաղկապների դիրքը հետևյալ օրինակներում. «Զի ո՞վ է ոսոխն իմ եկեսցէ, զի արդ կարկեցայց և պակասեցայց» (Յովր, ԺԳ, 19, փոխանակ ո՞վ է ոսոխն իմ գի) կամ՝ ուր դերանուն (եկեսցէ), «հուր եկի արկանել յերկիր, և կամէի քէ արդլն իսկ բորբոքէր» (Ոսկ., Մ. Մ., էջ 89, փոխանակ՝ և քե կամէի արդեն իսկ բորբոքէր), «իսկ զառնայր Մանուէլ երթայր ի բանակն տիկնացն հասանէր» (Բուդ., էջ 357, փոխանակ՝ իսկ Մանուէլ դառնայր)։

¹ Ա. Բաղրատունի, Հայերեն քերականություն ի պէտս դարգացելոց, Վենետիկ, 1652, էջ 610։

«դորոց դշափի և դղեղ և դաղդի ազգի յօրինում» հազիւ որ ուրեք երկ, պատմել կարասցէ» (Եւսեր., Ժամ., էջ. 69), փոխանակ՝ հաղիւ երկ ո՛ր ուրեք պատմել կարասցէ). «Այլ նմա գինի լոկ թուէր քի իցէ» (Բուդ., էջ 333, փոխանակ՝ այլ նմա թուէր քի զինի լոկ իցէ):

Շաղկապի և նրանով կապվող միավորի շարադասության խզման ժամանակ եթե միջանկյալ նախադասությունը նույնպես շաղկապով է սկսվում, ստացվում է պատահաբար իրար հանդիպած շաղկապների հարակից գործածություն: Շաղկապներից առաջինը վերաբերում է ետադաս նախադասությանը, իսկ երկրորդը միջանկյալ նախադասությանը, որի սկզբում դրված է, օրինակ. «Ոչ երբ վասնզի արհամարհանաց է մարգարիտն՝ կոխիցէ» (Ոսկ., Մ. Մ., էջ 362, փոխանակ՝ ոչ եթե կոխիցէ, վասնզի արհամարհանաց է մարգարիտն), «սակայն շատէ աստուած, երկ վասն զի ի վատութիւն հատեալ էք, չծագեմ զարեգակն, շիջուցանեմ զլուսին, կապեմ զարդանդ երկրի...» (Ոսկ., Մ. Մ., էջ 539) փոխանակ՝ շատէ աստուած, եթե չծագեմ զարեգակն, շիջուցանեմ զլուսին... վասն զի ի վատութիւն հատեալ էք), «բայց սակայն քի պիտ և ամենայն գործքս այս դմնեայ էին, չի էր ուրուք ձեռն արկեալ յայտնի յեկեղեցին» (Եղիշէ, էջ 23): Վերջին օրինակում շորս շաղկապի հարակից գործածությունը կարող է շաղկապների անկանոն կուտակում թվալ, բայց այստեղ էլ էապես երկու ամբողջական շաղկապներ են. առաջին երկուսի հարադրությունն իրենից ներկայացնում է հոմանիշների ավելագրությամբ կազմված մի բարդ շաղկապ բայց սակայն, մյուս երկուսը ևս շաղկապների մի սովորական կայուն հարադրություն են՝ քի պիտ և: Սրանցից առաջինը՝ ներհակական բարդ շաղկապը վերաբերում է ետադաս նախադասությանը, իսկ և-ի հարադրությամբ դրված զիջական շաղկապը վերաբերում է հենց միջադաս այն նախադասությանը, որի սկզբում դրված է: Այս կապակցության ուղղված շարադասությունը կլինի՝ քի պիտ և ամենայն գործքս այս դմնեայ էին, բայց սակայն չի էր ուրուք ձեռն արկեալ յայտնի յեկեղեցիս:

Սակայն բոլոր դեպքերում չէ, որ հարակից շաղկապների հարաբերակցությունն այսպիսի պատկեր ունի, այսինքն շաղկապի և կապվող միավորի հարադրության այսպիսի խզումից ու դրանց միջև միջանկյալ նախադասություն ընկնելուց չէ միայն, որ հարակից շաղկապներ են ստացվում: Կարող է պատահել, որ հարակից դրված բոլոր շաղկապներն էլ վերաբերեն այն նույն նախադասությանը, որի սկզբում դրված են. իրեն օրինակ վերցնենք հետևյալ կապակցությունը. «Քանզի հօր է՝ բռնանայ, իսկ արդ ո՞ր իցէ, որ դատաստանի նորա կայցէ հակառակ: Իսկ երկ իցեմ ևս արդար, սակայն բերան իմ ամպարշաւեացէ» (Յովր., Թ, 19, 20): Այս հատվածի մեջ ընդգծված շաղկապները՝ իսկ երկ, երկուսն էլ վերաբերում են նույն այն նախադասությանը, որի սկզբում դրված են: Իսկ-ը հակադրական կապ է ստեղծում այս և նախորդ նախադասության միջև, մինչդեռ երկ-ն պայմանա-գիշական հարաբերությամբ զուգորդում է ետադաս նախադասության սակայն-ին:

Վերցնենք մի ուրիշ նախադասություն. «Ոչ երբ զի մի ինչ շահիցի, ալ քի քի պիտ և ինքն նդովիցի, գէթ զայս ապրեցուցանիցէ» (Ոսկ., Մ. Մ., էջ 272): Այս կապակցության մեջ ընդգծված առաջին երկու շաղկապը՝ ոչ երբ, զի, վերաբերում են նույն նախադասությանը, որի սկզբում դրված են: Այլ զի քի պիտ և շաղկապներից առաջին երկուսը վերաբերում են ետադաս նախադասությանը, որից անջատված են: Շարադասությունը փոխելով կատանանք կապակ-

ցության հետևյալ ձևը՝ ո՛ւ եթ, զի մի ինչ շահիցի, այլ զի զեթ զայլս ապրեցուցանիցէ, բլպլտ և ինքն նդովիցի: Ինչպես տեսնում ենք շարադասության նույնիսկ այս ուղղված ձևում ստացվում է մինչև երեք շաղկապի հարակից գործածություն՝ այլ զի զեթ:

Հարակից որոշ շաղկապների դիրքային հարաբերակցությունը մի ուրիշ բացատրություն էլ կարող է ստանալ: Հարադրական բարդ շաղկապներից ոմանք երբեմն կարող են հանդես գալ բաղադրիչների անջատմամբ, որոնց մեջ կարող է մտնել մի այլ շաղկապ, օրինակ. «Քանզի զթշնամին կամէր զրումը ածել ոչ միայն քաղցին, այլ զի և յանապատն ևս երթալ՝ տաղէ նմա յօժարութիւն» (Ոսկ., Մ. Մ., էջ 193): Կապակցության մյուս բառերի հետ ընդգծված երեք շաղկապների փոխհարաբերությունը ենթադրել է տալիս, որ այստեղ այլև բարդ շաղկապի բաղադրիչներն անջատվել են իրարից և զրանց մեջ մտնել է զի-ն: Այս երևույթի պատճառը հավանաբար հաջորդ ետադաս ևս շաղկապն է, որը կապվող բառից առաջ պահանջում է և հոմանիշը, այսպես՝ և... ևս: Որ իրոք այստեղ եղածը այլև շաղկապն է զի-ով միջնորդավորված, կարելի է հաստատել նաև նրանով, որ բարդ նախադասության նախորդ մասում կա ոչ միայն շաղկապը, որը սովորաբար այլև-ին է դուգորդում: Լեռնաբար եթև վերակազմենք միջնորդավորված բարդ շաղկապի միասնությունը, կստացվի հետևյալ ձևը... ոչ միայն քաղցին այլև զի յանապատն ևս երթալ...

Այսպիսի միջնորդավորվածությամբ կարող են բացատրվել հարակից շաղկապները նաև հետևյալ կապակցություններում. «Նա զի և աղքատն իսկ իցես, յայն սակս կարևոր պէտք են հեզ և հանդարտ լինելոյ» (Ոսկ., Մ. Մ., էջ 234, փոխանակ՝ նաև զի աղքատն իսկ իցես), «Զի ոչ առանձինն ևեթ կամի զմեզ Աստուած պիտանի առնել, այլ զի և զայլս ևս ի պիտանութիւն ածիցեմք» (Ոսկ., Մ. Մ., էջ 288, փոխանակ՝ այլև զի զայլս ևս), «Զի ոչ միայն ասաց, ևթէ ոչ լուծանեմ, այլ թէ և լնում ևս» (Ոսկ., Մ. Մ., էջ 241, փոխանակ՝ այլև թէ լնում ևս):

Հարադրական բարդություն կազմող շաղկապների բաղադրիչները, եթե շատ սերտորեն չեն միաձուլված, ինչպես վերը նշված օրինակներում, կարող են իրարից անջատվել ոչ միայն շաղկապով, այլև ուրիշ բառերով, օրինակ. «Փոխանակ, ասէ զի ոչ անորոշեաց ժողովուրդդ այդ զջուրն Շիլհովայ...» (Ոսկ., Մ. Մ., էջ 99, փոխանակ զի ասէ), «Ապա յիրաւի ուրեմն ի նորոգման արարածոցն վերստին նորոգէ» (Բուդ., էջ 127, =ապա ուրեմն յիրաւի), «Ապա և ջուրք ուրեմն բնկուզանէին զմեզ (Սաղմ., ճիհ, (Ճիգ), 4, =ապա ուրեմն և ջուրք):

Բազմադան ձևերով հարակից կարող են զրվել երկու, երեք, չորս, երբեմն էլ ավելի շաղկապներ, բերենք մի քանի օրինակ. «Իսկ ապա եթ և դու ևս անկանիցիս փոխանակ անդրին թշնամանելով զնա» (Ոսկ., Մ. Պ., բ. հատ., 67), այս օրինակում կից զրված են չորս շաղկապներ, որոնք կապես երեք շաղկապի արժեք ունեն, որովհետև առաջին երկուսը՝ իսկ ապա, հոմանիշի ավելագրությամբ կազմված մեկ բարդ շաղկապ է, իբրև հարադրություն. «ապա ուրեմն ը, և զրեցի ևս առ ձեզ, ոչ վասն այնորիկ, որ զրկեացն» (Բ. Կորնթ., 2, 12), այստեղ էլ թեպետ կից զրված են չորս շաղկապներ, բայց փաստորեն երկու ամբողջական շաղկապի արժեք ունեն, քանի որ թե՛ առաջին երկուսը (ապա ուրեմն) և թե՛ վերջին երկուսը (թէ և) մեկ ամբողջական բարդ հարադրական շաղկապ են ներկայացնում իրենցից. «ևս լայց թէ ապա և որ եոցա իսկ մարդ էր, որ ձեր խարող հացկատակաց չոկն էր՝ և ոչ կարացեալ մտանէր ընդ գետին

վասն նոցա և խնդութիւն ևս թուէր այդպիսի լուրն» (Փարսլ., էջ 167—168): Վերջին նախադասութիւնը շաղկապների սոսկ անկանոն կուտակման մի օրինակ է:

Բ. Ավելադրութիւն և զեղչում.— Ավելադրութիւնը պետք է հասկանալ երկու իմաստով. ա) այն կարող է լինել ոճական կամ արտահայտչական ինչ-ինչ նկատառումներով կամ իմաստային որոշ առումով, որ տարածված լինելով հաճախ սովորական է դառնում, բ) բոլորովին ավելորդ, որ չի արդարանում բերականական կամ ոճական տեսակետից:

Առաջին կարգի ավելորդութիւններից է, օրինակ, անցյալ դերբայի և հաջորդ դիմաւոր բայի միջև ընկած և-ը. օրինակ. «Եւ այսպէս շորեքին բնութիւնքն ուստի աշխարհս կազմեալ և կայ, առանձին ապականիչք են միմեանց» (Նզնիկ, էջ 9). «Գուցէ Բաբկացեալ տէր աստուած ձեր, և խլից, զձեզ արմատաքի» (Բուդ., էջ 247): Այս կարգից են նաև հոմանիշների ավելորդութիւնը կազմված հարադրական շաղկապները՝ այլ սակայն, բայց սակայն ապա ուրեմն, իսկ ապա, ևս և, նմանապես՝ և, րլ, երլ շաղկապների հարադրութիւնները մի քանի շաղկապների հետ, առանց որեւէ ինքնուրույն իմաստի, այլ սոսկ արտահայտչականութեան համար՝ և կամ, և կամ րև, րլպէտ և, սակայն և, ուպլս և և այլն: Բոլոր այս զեղչերում շաղկապները զրկում են ավելադրութեամբ, սակայն շատ տարածված լինելով դարձել են կայուն ոճական ձևեր:

Երկրորդ կարգի ավելադրութիւնները, որքան էլ որ շարահյուսական կամ ոճական տեսակետից ավելորդ լինեն և շատ անգամ պատահական հավելման արդյունք համարվեն, այնուամենայնիվ եթե ոչ ամբողջությամբ, գոնե մեծ մասամբ, որոշ ընդհանրութիւններով կարելի է խմբավորել զանազան տեսակների մեջ. որոնք կարող են ստանալ իրենց բերականական կամ տրամաբանական բացատրութիւնը:

Գրաբարում ամենից հաճախ հանդիպում են « շաղկապի ավելադրութիւններ: Ավելադրութեամբ և երբեմն զրկում է պատճառ կամ պայման արտահայտող նախադասութիւններից հետո՝ գլխավոր նախադասութեան սկզբում, այն պէպքում, երբ այդպիսի պետք է կապվեն առանց և-ի, օրինակ. «Եթէ դուր ոչ պահանջի՞ր զօրէնս իմ և ես ցրուեցից պէկ ընդ հեթանոսս» (Նէէմ, Ա, 8). «Քանչի յիս յուսացաւ և վրկեցից զնա» (Սաղմ, Չ 2 (ՉԱ), 14), «արդ իբրև ետես թաղաւորն զայրն, զի դիմեալ եկեալ էր առ նա ամենայն ընտանեօրն հանդերձ, և մտերմութեամբ հաւատաց ի նա» (Ագաթ., էջ 21):

Պատահում է, որ հարցական-տրոհական նախադասութիւնների միջև, որոնք րլ, երլ շաղկապներով են բաժանվում, զրկում է բոլորովին ավելորդ և, օրինակ. «Ասէ՛րլ լինիցի՞ ինձ որդի Որմիզդ, և երլ չլինիցի և իզուր ինչ վատակիցիմ» (Նզնիկ, էջ 83—84), «Ոչ գիտեմ, րլ յանուն արա՞նցն զգաւառսն անուանեալ, և րլ յանուն գաւառացն զնախարարութիւնսն կոչեցեալ» (Խոր., էջ 117), «Եւ չգիտեմք երլ, ելանիցէ՞ մեզ այն ի դէպ և եթէ չելանիցէ, (Ոսկ., Մ. Մ., էջ 319), «Ոչ գիտեմ երլ յազագս այլ ինչ մեծ անպարապութեանց, և րլ չսորհելով զայսպիսի ծանր և կարևոր պէտս՝ չհոգացան իրացս» (Փարսլ., էջ 43):

Եւ շաղկապի անհարկի ավելադրութիւններ շատ կան մասնավորապես Աստվածաշնչում: Այստեղ զրեթէ միշտ նոր նախադասութեան կամ պարբերութեան սկզբում և է զրկած: այդ և-երը ամեն բոլոր կրկնվելով ստեղծում են յուրատեսակ պոլիսինդետոն (բազմաշաղկապութիւն), դառնում են ավելորդ ծանրաբեռնվածութիւն և իրենց միապաղաղ կրկնութեամբ լեզուն զրկում են ար-

տահաշտշականությունից. բերենք միայն մի փոքրիկ քաղվածք. «Եւ մեռաւ Նդիսեէ, և թաղեցին զնա: Եւ մեկնակազէնքն Մովսէսու ելին յերկիրն ի գայ տարուոյն. և եղև ի թաղել նոցա զայր մի, և ահա տեսին զմեկնակազէնսն և ընկեցին զայրն ի գերեզմանն նդիսէի. և զնաց և մերձեցաւ յոսկերսն նդիսէի և կենդանացաւ, և կանգնեցաւ ի վերայ ոտից իւրոց» (Դ. Թագ., ԺԳ, 20, 21): Այս փոքրիկ հատվածում եղած 41 բառից տասը և շաղկապն է: Այսպիսի ոճը բնորոշ է աստվածաշնչի և մի քանի ուրիշ աշխատությունների համար: Աւերի այս ավելորդ առատությունը համարվում է սեմական լեզուների (եբրայեցերեն, ասորերեն) ազդեցության հետևանք: Հայտնի է, որ սեմական լեզուներում, օրինակ, արաբերենում նոր նախադասությունը գրեթե միշտ սկսվում է և-ին համարժեք շաղկապով: Նույնն է և Աստվածաշնչում, միայն Ծննդոց գրքի առաջին գլխում եղած 31 պարբերությունից (բոստ նշանակված իվահամարների) 30-ը սկսվում է և-ով:

Առանց ոճական անհրաժեշտության ավելադրությամբ զրկած գտնվում են նաև բազմաթիվ ուրիշ շաղկապներ, որոնց առկայությունը կարելի է բացատրել որևէ պատահական հավելմամբ: Երկմն պատահում է, որ միևնույն նշանակությամբ երկու շաղկապ է գրվում նույն նախադասության մեջ, օրինակ. «Արդ՝ երբ յանկարծ քո քէ գտցի որ զդիսն անսպասուկսցէ» (Ագաթ., էջ 76), «Այլ զի դու Բանգի շես արշակունի, զնա յաշխարհէս, և մի մեռանիր ի ձեռաց իմոց» (Բուգ., էջ 360): Միևնույն նախադասության մեջ եղած երկու ընդգծված շաղկապներից մեկը այս օրինակներում բոլորովին ավելորդ է, քանի որ երկուսն էլ միևնույն իմաստն ունեն: «Քանզի և ոչ բարին առանձինն՝ բարի է, և ոչ չարն՝ չար, այլ ըստ մտացն՝ որ կամ քէ զայն յառաջ բերիցէ կամ թէ զայս» (Ոսկ., Մ., ես, 118) «Նդի ի մտի իմում մի յերկուց աստի, կամ քէ դու Աստուած իցես իջեալ յերկնից, և գործես զայգ. կամ թէ որդի իցես Աստուծոց, և զայգ առնես» (Խոր., էջ 149): Այս երկու օրինակներում էլ ընդգծված քէ-ն ավել է, որովհետև կամ-ը կրկնվելիս սկզբում չի կարող քէ-ով գործածվել:

Ավելադրությունների մեծ մասն առաջանում է քերականական անհետևողականությունից: Հաճախ է պատահում, որ մի նախադասություն, որը կարող է արտահայտվել երկու ձևով, կազմվում է այդ երկուսի խառնուրդով, սկսվում է մեկ, բայց վերջանում է մի ուրիշ ձևով. ստացվում է նախադասության կառուցվածքի երկու ձևերի բաղադրություն (կոնտամինացիա): Այս երևույթը հստակ կերպով բացատրել է Այտրնյանը. «Խոսք մ՝ երբ երկու կերպով կրնա ըսվիլ, երբեմն կրնա գրողին գրչին ներքև այն երկու կերպերն բաղադրություն մ՝ ելլել որ ոչ մեկն է և ոչ մյուսը, այլ ճշդիվ քերականորեն խոսելով՝ սխալ է, րնտանեկան բերանացի անկանոն խոսվածքի նմանությամբ, որ երբեմն առաջին կերպով սկսած՝ երկրորդով կը վերջացնէ. և չէ՛ այն զարտուղությունց կարգեն, որոնք լեզվին սովորական եղած ըլլալով՝ թեև անկանոն՝ լեզվի հատկությունք կրնան համարվիլ»²:

Այս բնույթի անկանոնությունը, որ քերականագիտության մեջ կոչվում է անակոյուֆ (անհետևողականություն), կարող է արտահայտվել բազմազան ձևերով, բերենք մի քանի օրինակ. «Թսկ զիա՞րդ զի իբրև զբող քարշեցին զքոյրն մեր» (Ծննդ., ԼԳ, 31): Այս նախադասությունն անկանոն կազմություն ունի, որն առաջացել է նրա արտահայտման հնարավոր երկու ձևերի խառնուրդի հետե-

² Վ. Չալոխյան, Քերականութիւն հայկազնյան լեզվի, Վիեննա, 1865, էջ 460:

վանքով: Ձի շաղկապը սլահանջում է, որ իրենից առաջ լինի բայական դիմավոր ձև, որն այստեղ բացակայում է, իսկ սոսկ հարցական բառից հետո առանց բայական արտահայտության, զի չի կարող զրվել: Բերված նախադասության երկու ձիշտ ձևերն են.

1) Իսկ զի՜արդ է, զի իբրև զբող քարչեցին զքոյրն մեր.

2) Իսկ զի՜արդ իբրև զբող քարչեցին զքոյրն մեր:

Բայց տեքստում մեզ հասել է այս երկու ձևերի խառնուրդ, որի մեջ բաց է լիռնված օժանդակ բառը, և դրա հետևանքով ավելորդ է դարձել այստեղ եղած զի-ն:

«Էր, ասէ, երբեմն, մինչ ընդ բնաւ խաւար և ջուր էր, և էին անդ այլ ինչ գազանք, յորոց կէսքն ինքնաձիւնք էին, և կերպարանս կենդանաձինս ունել, և մարդիկ երկթեանս ծնանել» (Եւսեբ., Ժամ., էջ 22): Այս նախադասության անկանոնությունը, անհետևողականությունն այն է, որ սկիզբը դիմավոր ձևով է, իսկ վերջը՝ անդեմ (անորոշ դերբայով). պետք է համաձայնեցնել. հարմար է վերջին մասը դիմավոր դարձնել՝ և կերպարանս կենդանաձինս ունէլին, և մարդիկ երկթեանս ծնանէլին: Նույնպիսի անհամաձայնության օրինակ է նաև «ետեյալը՝ «Եւ ո՞րեւոյն ասեն, որ յունարէն Դիոս թարգմանի, և հայերէն արամազդ, թէ ընդ մէջ կարեւաց զխաւարն և զատանիլ ի միմեանց զերկինս և զերկիր, և յորդորել յօրինել զաշխարհ» (Եւսեբ., Ժամ., էջ 25), որտեղ առաջին բայը դիմավոր է, իսկ մյուսներն անդեմ: Թէ շաղկապից հետո բոլորն էլ պետք է դիմավոր լինեն, իսկ երբ անորոշ դերբայով են զրվում, ավելորդ է դառնում քի շաղկապը:

«Մանուցանէաք եկելոցն ի վերայ մեր, քի արդարև որպէս զկրի՜ այր եմք և կամ թէ որպէս զԱսորի» (Փարպ., էջ 168), «Եւ ասէ ցնոսա եթէ երթա՜յ՞ յՌա-մովթ Գաղատա ի սլատերազմ և կամ թէ դադարեցից» (Բ., մնաց., ԺԸ, 5): Այս երկու օրինակում ավելորդ է ընդգծված և կամ շաղկապը, կամ էլ՝ նախադասությունների հարցական բնույթը, որովհետև հարցական նախադասությունների միջև տրոհական նշանակությամբ միայն քի, և քի, բավական են, իսկ կամ-ը տրոհական դեր կատարում է ոչ հարցական նախադասությունների միջև: Ուստի բերված նախադասությունները հարցական լինելու պատճառով դրանց մեջ տրոհական քի-ի հետ կամ-ի համադրումը տրամաբանական անհետևողականություն է:

Երբ բարդ նախադասության մասերը կարող են կապակցվել ուղերան-վամբ և քի շաղկապով, սլատահում է, որ այդ երկուսն էլ զրվում են այն դեպքում, երբ միայն մեկը բավական էր: Հետևյալ օրինակներում համատեղ զրված ու և քի բառերից մեկն ու մեկը բոլորովին ավելորդ է. «Եւ ոչ էր բան յամենայն խոսիցն Մամիկոնենին վահանայ զոր քի չէր թուեալ նիխորոյ» (Փարպ., էջ 163—164), «Եւ զայլ ոք ոստիկան ձեր յիմում վերայ չէր կացուցեալ ու քի ինձ ի հարկէ տայր բերել այսր այդպիսի բաղմութիւն ոսկոյ» (Փարպ., էջ 117), «Զի չէ ինչ ծածուկ ու քի ոչ յայտնեսցի, և ոչ եղև ինչ դադունի՝ եթէ ոչ ի յայտ դայցի» (Մարկ., Դ, 22):

Գրաբարի շարահյուսական կանոնների համաձայն ոչ և քի շաղկապը սլահանջում է, որ իրենից հետո նախադասության հաջորդ մասում զրվի այլ ներհակական շաղկապը: Առանց այս վերջինիս ետադաս զուգադրության ոչ և քի-ն սովորաբար չի գործածվում: Սակայն հազվագեղ պատահում է ոչ և քի շաղկապն առանց հաջորդ ալի-ի, հեղինակը կարծես մոռանում է, թե ինչպես է

ուկսել նախադասությունը և միտքն ընդհատելով՝ բարդ նախադասության հաջորդ մասը չի բերում: Այսպիսի դեպքերում միայն ոչ-ը բավական է, իսկ նրա հետ երբևէ շաղկապի առկայությունը խոսքի մեջ տրամաբանական անհետևողականություն է մտցնում, օրինակ. «Եւ եթէ կթողք մտեալ էին ի քեզ, և ո՛չ երբէ ճիւղ մի ոչ թողուին» (Աբդիու, 5), «Տեսէք և զգոյշ լերուք, զի ոչ երբէ ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա» (Ղուկ., ԺԲ, 15), «Քանզի ոչ երբ սահմանք ինչ զաստուածականն բովանդակիցեն, եթէ հայրն յերկինս, և միածին որդին ճշմարիտ հօդին յերկրին» (Ագաթ., էջ 367):

Նախադասության կազմության երկու ձևերի բաղադրվածությամբ՝ անհետևողականություն հատկապես շատ է պատահում որոշ շաղկապներից հետո դրված անորոշ դերբայով, այն դեպքում, երբ տվյալ շաղկապը պահանջում է դիմավոր բայ, օրինակ. «Պարտ է զի ի դաշտէն ի լեռնակողմն փոխել» (Փարս., էջ 123): Զի շաղկապն իրենից հետո դիմավոր բայ է պահանջում, իսկ եթե անորոշ դերբայ է դրված, այդ դեպքում զի-ն դառնում է ավելորդ, մինչդեռ Փարսկացուց բերված այս օրինակը կազմված է շարահյուսական այդ երկու հնարավոր ձևերի խառնուրդով, ճիշտը պետք է լիներ՝ Պարտ է, զի ի դաշտէն ի լեռնակողմն փոխիցեն. կամ՝ Պարտ է ի դաշտէն ի լեռնակողմն փոխել: Այսպես նա՝ «Դարձեալ հրաման տայր վասն առաքինւոյն Գայիանեայ, թէ նախ զլեզուն ընդ ծործորակսն Խանել և ապա սպանանել» (Ագաթ., էջ 110) նախադասությունը բաղադրություն է հետևյալ երկու շարահյուսական ձևերի՝ 1. Դարձեալ հրաման տայր վասն առաքինւոյն Գայիանեայ, թէ նախ զլեզուն ընդ ծործորակսն Խանցեն և ապա սպանցեն. 2. Դարձեալ հրաման տայր վասն առաքինւոյն Գայիանեայ նախ զլեզուն ընդ ծործորակսն հանել և ապա սպանանել:

Զի շաղկապից հետո անցյալ դերբայով ևս նման անկանոնության դեպքեր լինում են, օրինակ. «Ապա երթեալ տեսանէին զի ժամադիր արարեալ միմեանց վասն իրաց պատերազմին կողմանցն երկոցունց» (Բուդ., էջ 202), փոխանակ՝ տեսանէին զի ժամադիր արարեալ եւ... կամ սոսկ՝ տեսանէին ժամադիր արարեալ:

Լեզվական անկանոնության այսպիսի երևույթներն ընդհանրապես բանավոր խոսքին, խոսակցական լեզվին են հատուկ: Քանի որ խոսողը չի մտածում խոսքը քերականական խիստ հետևողականությամբ կառուցելու մասին, այլ խոսում է ինքնաբերաբար, ուստի որքան էլ աշխատի ճիշտ և հստակ խոսել, այնուամենայնիվ անխուսափելի են անճշտություններ և շեղումներ լեզվի կանոններից: Մեր հնագույն տեքստերում եղած քերականական նման անկանոնությունները, եթե դրանց զոնե մի մասը սկզբնական ձևեր համարենք, կարող են վկայել այդ տեքստերի և ժամանակի խոսակցական լեզվի նույնության կամ նմանության մասին, որովհետև այսպիսի անկանոնություններ կարող են տեղ գտնել այնտեղ, որտեղ զործ ունենք մի կիսադրուագետ մարդու գրածի հետ, կամ այնտեղ, որտեղ ժողովրդի խոսակցական լեզուն դեռ նոր է զրի անցնում և չկա գրավոր, մշակված խոսքի երկար փորձ, և այն ժամանակ, այդ գրավոր լեզվի մեջ ևս անխուսափելիորեն տեղ կգտնեն բանավոր խոսքի նշված հատկանիշները:

Ավելագործության հակառակ երևույթ է դեղչումը: Եթե շաղկապի ավելագործությունը լեզվի սովորական կանոնների շեղում է և անկանոնություն է մտցնում խոսքի մեջ, ապա դեղչումն ընդհակառակն, ոճական ձև է, որ համա-

սլատասխանում է խոսքի արտահայտման նորմաներին՝ առանց խախտելու նրա բերականական կամ տրամաբանական կառուցվածքը: Նազկապի զեղչման մեջ մտնում են այն դեպքերը, երբ շարահյուսական միավորներն իրար հետ կապակցվում են առանց շաղկապի, այն ժամանակ, երբ միևնույն ձևով ու կապմոթյամբ կարող էին կապակցվել նաև շաղկապով: Հետևաբար այս դեպքերի մեջ մտնում են անշաղկապ կամ շարահարություն կապակցությունները: Առանց շաղկապի կապակցությունը մասնավորապես ժողովրդական-խոսակցական լեզվին է հատուկ: Ինչպես հայտնի է, ժողովրդական, և ընդհանրապես բանավոր լեզվում շաղկապ ավելի քիչ է գործածվում, քան գրականում, ընդ որում բարբառներում չկա շաղկապների այնպիսի առատություն ու բազմազանություն, ինչպես գրական լեզվում: Այս պատճառով գրողները հաճախ որոշ կերպարներ տիպականացնելու կամ ժողովրդական բանավոր խոսքի բնորոշ «խինակ տալու համար բանեցնում են այնպիսի լեզու, որի մեջ շաղկապների կիրառությունը նվազագույնի է հասցված: Նախադասության համազոր անդամները, կամ համազոր նախադասություններ, որոնք սովորաբար, մանավանդ վերջին միավորը, կապվում են լ-ով, պատահում է, որ հաջորդում են իրար սոսկ շարահարությամբ, առանց և շաղկապի, օրինակ. «Խաչեցաւ, մեռաւ, թաղեցաւ, յարեաւ յաւուր Երրորդի» (Նղիշէ, էջ 40), «Բայցես լույս զթին, սսեն, Եթէ լսես զերազս, մեկնես» (Ծննդ., ԽԱ, 15), «Զախոյանն ընկեց, զպատերազմն հնար, զթշնամիսն ցրուեաց, զաւարն ժողովեաց, զգերիսն զարձոյց, զպարզիսն բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց ի ձեռն իւրաքանչիւր առաքինութեան» (Նղիշէ, էջ 113), «Յիզացան զանօրէնութիւն, ծնան զբազմազոյն լեզուացն բաժանումն, զի մի լուիցէ այլ բարբառոյ, ի միմեանց մեկնելով զրուեցան» (Աղաթ., էջ 319):

Քրաբարում շատ է տարածված հատկապես բայերի դիմավոր և անդեմ ձևերի, մանավանդ հոմանիշ բայերի հաջորդական շարահարությունն առանց և-ի, այսպես՝ պրկեալ կալեալ, խաղայր, զնար, աւերէր, քանդէր, խլեաց քակեաց, այրեցաւ հալեցաւ կորեաւ, զայր հասանէր, չոգաւ յաղթեաց, տապալեաց, հանդերձէր կազմէր առնոյր (Աղաթ.) ելին լցին ծածկեցին, խաղալ հասանել ի դիմի հարկանել, արդելուլ, զնացին, եկին, հասին, բերին ածին, զնացին տարան եղին, երթային, տանէին, հատանէին (Բուզ.), եկն ևհաս, եկն Լմուտ, մատիր մերձեաց. արի եկ. (Կիրդի կոչումն, ընծ.), կալ մնալ, կան մնան. մեկնեցան խաղացին զնացին. հատանիցէ ընկենուցու. խոնարհեցուցանէ կորացուցանէ. մաշի պակասի սպառի (Բարսղի վեցօրեայր):

Եւ-ով կապվող շատ սովորական բառակապակցություններ ևս, ինչպես՝ նախ և առաջին, այսօր և անդր և այլն, սլատահում են երբեմն առանց և-ի, օրինակ. «Նախ առաջին ի մտի ձերում հաստատուալ կայցեն հրամանակարդ տատուածութեանն» (Կիրդի կոչ. ընծ., էջ 48), «Նախ առաջին հեղութեամբ քաղցրութեամբ է զալուստ նորա» (Կիրդի կոչ. ընծ., էջ 349), «Իսկ Եթէ զնա թողեալ այսր անդր հայիցի բանդադուշեալ» (Ոսկ., Կ. Կ., էջ 304):

Հակադրական կապակցություններում հաճախ է զեղչվում իսկ շաղկապը, օրինակ. «Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր, որդի անմիտ տրտմութիւն է մօր» (Առակր, Ժ, 1), «Որհնութիւն Տեառն ի զլուսս արդարոց, զըրեանս ամպարշտաց ծածկեսցէ սուգ տարածամ: Յիշատակ արդարոյ գովութեամբ անուն ամպարշտաց շիջցի» (Առակր, Ժ, 6, 7), «Ընդ ծառայսն տէրն, ընդ պատժապարտսն դատաւորն զայր ի մկրտութիւն» (Ոսկ., Կ. Կ., էջ 171):

Ուրիշ շաղկապների բացթողումներ ևս պատահում են զուտ բանավոր խոսքի նմանությամբ, որ համառոտ է, դիպուկ և անսլաճույճ, համապատասխան շաղկապի ավելացումը նման դեպքերում արտահայտվող միտքը որևէ ձևով չի փոխում, միայն ոճը դարձնում է գրքային, օրինակ. «Թոյլ տուր ինձ լացից դառնապէս» (նսայի, ԻԲ, 4 = զի լացից), «և այնպէս արար ամենայն կանանց իւրոց օտարոտոց. արկանէին խունկս և զոհէին կոոց իւրեանց» (Գ Թագ., ԺԱ, 8, — այնպէս արար... զի արկանէին), «մի հոգայք լիսսն ոգւոց ձերոց՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք» (Մատթ., 2, 25, — թէ զինչ ուտիցէք), «իսկ եթէ սկիզբն սուրբ է, և զանգումսն. և եթէ արմատքն, ապա և ոստքն» (Հռովմ., ԺԱ, 17 — ապա և զանգումսն):

Այստեղ պետք է նշել, որ զեղչված շաղկապով արտահայտվող խոսքը դիպուկ է, համառոտ և արտահայտիչ, այն ավելի կենդանի է հնչում, և ընդհակառակն, շաղկապի հաճախակի գործածությունը լեզուն զրկում է կենդանությունից և ծանր է դարձնում ոճը:

Շարահարությամբ կամ անշաղկապ կապակցություն կազմելն իհարկև ամեն դեպքում հնարավոր չէ, դա կարելի է կարճ և պարզ նախադասություններում, իսկ ընդհանրապես ծավալուն, երկարաբան նախադասություններում մեծ մասամբ դժվար է խուսափել շաղկապների գործածությունից:

Գ. Պեսալիսություն և նույնություն. — Պեսալիսությունը ոճական մի հնարան է, որը օգտագործվում է խոսքի մեջ բառերի կամ քերականական արտահայտության միջոցների կրկնությունից խուսափելու համար: Երբ անհրաժեշտ է մի նախադասության կամ խոսքի մի հատվածի մեջ միևնույն բառը կամ քերականական միևնույն ձևը կրկնել, այդ դեպքում հաճախ գործածվում է արդեն եղած բառի կամ քերականական ձևի հոմանիշը և այդպիսով արտահայտչականություն և բազմազանություն է մտնում խոսքի մեջ: Այս երևույթը, երբ այն ճաշակով է օգտագործվում, լեզվի հարստության և ճկունության ցուցանիշներից մեկն է:

Տարբեր շաղկապների նույն կամ նման նշանակություն ունենալը մի կողմից և միևնույն շաղկապի մեկից ավելի նշանակություններ ունենալը մյուս կողմից հնարավորություն է տալիս շաղկապները ևս պեսալիսությամբ օգտագործելու: Հնագույն տեքստերում հաճախակի ենք հանդիպում շաղկապական հոմանիշների գեղեցիկ գործածությանը բազմազան ձևերով, որ վկայում է մեր հին հեղինակների լեզվական բարձր կուլտուրայի և գրաբարի առատ հնարավորություններն օգտագործելու հմտության մասին: Ստորև բերում ենք օրինակներ, որոնց մեջ շարահյուսական միավորների միջև միևնույն հարաբերությունն արտահայտելու համար պեսալիսությամբ օգտագործված են տարբեր, բայց հոմանիշ շաղկապներ:

Իսկ — և. «Իմաստունն զարհուրեալ խոտորեցաւ ի շարէ, իսկ անզգամն յանձնապատան խառնակի ընդ անօրինին: Բարկասիրտ՝ դործէ առանց խորհրդոյ, և այլ իմաստուն՝ յոյժ համբերէ: Բաժանին ամպարիշտք զշարիս, իսկ խորագէտքն զօրանան իմաստութեամբ: Գայթակղեսցին շարք առաջի բարեաղ, և ամպարիշտք կողկողեսցին առ զրունս արդարոց» (Առակք, ԺԴ, 16—19):

Ապա — իսկ. «Ապա եթէ վնասակար իցեմ և արժանի ինչ մահու գործեցի, ոչ զանգիտեմ ի մեռանելոյ. իսկ եթէ ոչ ինչ է գորոց սոքա ամբաստան. լինին զինչն, ոչ ոք կարէ դոցա շնորհել» (Գործք, ԻԵ, 11):

Այլ — սակայն. «Եթէ աղքատ իցես ալ աղատ հս. և եթէ ձեռնադէտ ինչ, սակայն քրիստոնէական էս» (Ոսկ., Մ. Մ., էջ 234), «Զի թէսէտ և թշնամանեցաւ. սակայն հայր է. թէսէտ և ցասուցեալ իցէ, ալ որդեսէր է» (Ոսկ. Մ. Մ., էջ 354):

Թլ. Լըլ — զի. «Զի դի՛նչ է զօրութիւն իմ Լըլ համբերից. կամ դի՛նչ ժամանակ՝ զի հանդարտեցէ անձն իմ» (Տոմր. Զ, 11), «ո՛ է մարդ զի յայտնեցար նմա, կամ որդի մարդոյ՝ րէ համարիս ինչ զնա» (Սաղմ., ՃեԳ (Ճիսղ)՝):

Զի — որովհետև. «Եւ ասէ վա՛շ վա՛շ, զի բեկաւ կորեաւ, առ իս դարձցին ազգրն, որովհետև լին աւերեցաւ» (Նզեկիէլ, ԻԶ, 2):

Զի — ուրպէս զի. «Եղին առաջի նորա մերդ, խնձոր և վարունդ և ամիճ. զի էրիցէ. և եղին դանակ նմա. ուպես զի հատցէ և կերիցէ զիարդ և կամեացի» (Բուգ., էջ 311):

Թլև րէպէտ. Բաց աղէ իսկ եկ ասա, րէպէտ ծով շանկանիցի րէև ձուկն շուտիցէ... զիա՛րդ լուծեալն յառնիցէ ո՛րպես հողն և մոխիրն կցիցի, ի՛րբ ծաղիկ մարմնոյն ծաղկիցի»³ (Ոսկ., Մ. Պ., Բ. հատ., էջ 446):

Պետպիստութիւն առաջանում է նաև որ հարաբերական ղերանվան հետ զի. րէ շաղկապները շփոթելու հետեանքով, երբ վերջիններս գործածվում են հարաբերական ղերանվան փոխարեն, օրինակ. «Եղէ ևս որպէս զխուլ որ ոչ լսէ. և իբրև զհամր զի ոչ բանայ զբերան իւր» (Աղաթ., էջ 47), «Եղիցի նմա որպէս հանդերձ զի ազանի, որպէս զոտի որ ածի հանապաղ ընդ մէջ» (Սաղմոս, ՃԸ (ՃԹ), 19), «Ոչ ոք է ի դժոխս որ խոստովան առնի առ քեզ, և ոչ ոք է րէ յայնմ մահու յիշէ դքեզ» (Աղաթ., էջ 267):

Պետպիստության մի տեսակ է շաղկապների կիրառության նաև հետևյալ դէպքը. երբ բացատրական րէ, կամ Լըլ-ին, այս ղեպում ղրանցից առաջինը փոխվում է զի-ի, բանի որ հնարավոր չէ Լըլու նույնանուն շաղկապներ իրար մոտ գործածել, օրինակ. «Եւ ոչ թլպատութիւն ընդունիմք, և ոչ տօնս տարեկանաց, ունկնդիր լեալ Պաղտսի՝ որ ասէր. Զի եթէ թլպատիք՝ Քրիստոս ինչ ձեզ ոչ օգնէ» (Ոսկ., Մ. Ես., էջ 7), «Եւ խծրծիցեն զօրէնսն՝ և ասիցեն, զի Լըլ որ մօրտան կոչիցէ՝ տանջիցի» (Ոսկ., Մ. Մ., էջ 244), «Եւ թերևս բազում անգամ ասիցես, զի րէ ես իշխան էի. և յայտնէր ոք ինչ, վաղվադակի թողութիւն առնէի» (Ոսկ., Մ. Պ., Բ. հատ., էջ 503), «Յորժամ տեսանիցես զաղբատն, մի՛ զանց առնիցես, ալ վաղվալ Պաղտսի՝ որ ասէր. Զի Լըլ թլպատիք՝ Քրիստոս ինչ ձեզ ոչ օգնէ» (Ոսկ., Պ. Բ. հատ., էջ 503): Բացի վերը հիշվածներից լինում է նաև շաղկապի և նրա հետ առնչվող քերականական զանազան միջոցների համատեղ գործածությունը պետպիստությամբ. Որեւէ հարաբերություն կրկնելու անհրաժեշտության ղեպում հաճախ օգտագործվում է տվյալ կապակցությունը շաղկապին ղուղահետ մի ալ միջոցով արտահայտելու հնարավորությունը, օրինակ. «Ո՛չ ասաքէն զի բնեացեն զքաղաքս և զիտեւ զերկիրս և կին ծառայքս նորա առ քեզ» (Ա. մնաց., ԵԹ, 3): Այս նախադասության մէջ նպատակի հարաբերությունը կրկնված է Լըլու անգամ, սկզբում զի շաղկապով և ղիմավոր բայով, իսկ հետո սոսկ տնորոշ ղերբայով. Երկու բայերն էլ միանման կարող էին ղրվել զի շաղկապի

³ Այս օրինակի վերջում ուշադրության արժանի է նաև զիա՛րդ, ո՛րպէս, ի՛րբ հարցական բառերի ղեղեցիկ պետպիստությունը:

⁴ ՏԵ՛ս Գ. Զ ա լ ը ի յ ա ն, Քերականութիւն հայկադնյան լեզվի, էջ 160:

հետ դիմավոր ձևով, կամ ընդհակառակն, երկուսն էլ կարող էին դրվել սոսկ ածորոշ դերբայով առանց շաղկապի, բայց զանազանության համար գործածված են տարբեր ձևերով: Մի ուրիշ օրինակ. «Եւ վաղվաղակի բուսաւ առ ի չղոյէ հիւթոյ երկրին, ի ծագել արեւու տապացաւ, և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ» (Մատթ., ԺԳ, 6): Այստեղ էլ առաջին նախադասության մեջ պատճառական հարաբերությունը կարող էր արտահայտվել զի շաղկապով և դիմավոր բայով՝ զի ոչ գոյւ ևիւր երկրիւ, կամ ընդհակառակն վերջին նախադասությունն էլ առաջինի նման կարող էր առ նախորդով և բացառական հոլովով արտահայտվել առ ի չղոյէ արմատոց. եթե այդպես լինեք, շարահյուսական կապակցության նույն ձևը կկրկնվեր երկու անգամ, կստացվեր նմանաբանություն, որից հաջող կերպով խուսափել է հեղինակը: Պեսայիսությունը լեզվի արտահայտչական հնարավորությունների ճշգրիտ օգտագործումն է, բայց կա նաև սրան հակառակ երևույթ, դա այն է, որ միևնույն կամ հարակից նախադասություններում, երբ արտահայտվում են տարբեր հարաբերություններ և կարելի է ազատ կերպով գործածել տարբեր շաղկապներ կամ շարահյուսական ուրիշ միջոցներ, պատահում է, որ նույն շաղկապը կրկնվում է: Այս երևույթը, որ կարելի է անվանել նույնություն, պեսայիսությանը հակառակ, լեզվի մեջ մտցնում է միօրինակություն և այն զրկում է արտահայտչականությունից, օրինակ. «Երեսմք, ևթէ բարութ են օրէնքն, ևթէ ոք զնոսա օրինօք կրեսցէ» (Ա. Տիմ., Ա, 8): Այս նախադասության մեջ երկու անգամ կրկնված միևնույն շաղկապի արտահայտած հարաբերություններն իրարից տարբեր են, ուստի կարելի էր և անհրաժեշտ էր կիրառել տարբեր շաղկապներ, հարմար կլինեք առաջին երկ-ի փոխարեն զի զնելու: Այսպիսի նույնության դեպքեր սակավագեղ են պատահում, օրինակ. «Եսկ երէ տեսանմք՝ երէ թագաւորի որդի թագաւոր լինի...» (Եզնիկ., էջ 111), «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, զի զորդին իւր միածին եղ ի վերայ, զի զամենայն, որ հաւատայցէ ի նա մի կորիցէ» (Ագաթ., էջ 225): Համեմատության համար վերջին նախադասությունը բերենք Աստվածաշնչից, որտեղ այն պեսայիսությամբ է. «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ մինչև զմրդին իւր միածին էտ, զի ամենայն որ հաւատայ ի նա մի կորիցէ» (Յովհ., Գ, 16):

Ինչպես որ պեսայիսությունը հակառակ է նույնությանը, այնպես էլ զեղչումը՝ ավելադրությունը, սակայն դրանք բոլորն էլ օգտագործվում են մեծ մասամբ խոսքի ոճական ձևավորման համար՝ տարբեր ձևերով ու տարբեր կողմերից: Շաղկապների կիրառության նկարագրված շարահյուսական ու ոճական ձևերը, ինչպես և մի քանի ուրիշ ինքնատիպ ձևեր, ինչպես օրինակ, շեշտված կրկնությունը (և՛...և՛, թէ՛...թէ՛, կա՛մ...կա՛մ), տրամաբանական զուգադրությունը (եթէ...այա, թէպէտ...սակայն, ոչ միայն... այլև), հոմանիշներով զուգադրությունը (և...ևս, այլև...ևս, մինչև... անգամ) և այլն, խոսքի շարահյուսական-ոճական կառուցվածքի, կապակցության եղանակի անբաժանելի տարրերից են: Կիրառական այդ բազմազան ձևերով ու հնարավորություններով շաղկապները ծառայում են խոսքի ոչ միայն սոսկ կապակցության, այլև դրա հետ միասին արտահայտչական-իմաստային բազմաթիվ այնպիսի դրսևորումներին, որոնք շաղկապի առանձնահատուկ բնագավառին են վերաբերում:

Շաղկապների կիրառության նշված առանձնահատկությունները հիմնական մասով հին հայերենից անցել են ժամանակակից հայերենին և արտացոլ-

լում էն մեր հին ու նոր լեզուների շարահյուսության ու ոճաբանության էական կողմերը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ագաթ.— Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան, և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909:
 2. Բարսեղի Վեցօրեայք.— Սրբոյ Բարսեղի Լոյսկոպոսի Կեսարու կապաղովկացւոյ ճառք վասն վեցօրեայ արարչութեանն, Վենետիկ, 1830:
 3. Իուզ.— Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913:
 4. Եզնիկ.— Եզնիկայ Վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914:
 5. Եղիշէ.— Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երեւան, 1957:
 6. Եւսեբ., Ժամ.— Եւսեբի Պամփիլեայ կեսարացւոյ Ժամանակականք երկմասնեայ, մասն Ա., Վենետիկ, 1818:
 7. Խոր.— Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեւելեան և Մ. Յարութիւնեան, Տփղիս, 1913:
 8. Կիրդի Կոշումն ընծ.— Երանելւոյն Կիրդի Երուսաղեմայ Հայրապետի կոշումն ընծայութեան, Վիեննա, 1832:
 9. Ոսկ., Մ. Ես.— Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վենետիկ, 1880:
 10. Ոսկ., Մ. Մ.— Յովհաննու Ոսկեբերանի յաւետարանագիրն Մատթէոս, Վենետիկ, 1826:
 11. Քսկ., Մ. Պ.— Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Թղմոցն Պաւլոսի, հատ. առաջին, Վենետիկ, 1862, հատ. երկրորդ, Վենետիկ, 1862:
 12. Փարպ.— Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան Տփղիս, 1904:
- Աստվածաշնչի օրինակները բերված են Վենետիկի 1860 թվականի հրատարակությունից: